## ՀԱՅ ՄԵԾ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

(Ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանի 85-ամյակի առթիվ)

*Լրացավ հայ փիլիսոփայական մտքի խոշորագույն ներկայացուցիչ, ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի 85-ամյա հոբելյանական տարին: Աշխարհի ավելի քան 30 երկրներում թարգմանաբար հրատարակված 70 մենագրական հետազոտությունների, դասագրքերի, գրքույկների և շուրջ 200 հոդվածների հեղինակ է Գ. Բրուտյանը: Մեծավաստակ գիտնականի աշխատությունների բովանդակային էությունը վկայում է բրուտյանական փիլիսոփայական դպրոցի և գիտական ուղղությունների ծանրակշիռ ու հարատև հիմքերի մասին:*

*Ակադեմիկոս Գ. Բրուտյանի գիտամանկավարժական գործունեության առանձին ուղղություն է նրա անձնվեր աշխատանքը երիտասարդ գիտական կադրերի հետ՝ տաղանդավոր և շնորհաշատ ուսանողների հայտնաբերումից մինչև ասպիրանտական կրթության միջոցով մասնագետներ պատրաստելը: Գ. Բրուտյանի՝ ավելի քան 30 ասպիրանտներ արժանացել են գիտական կոչումների և այսօր զբաղված են հետազոտական արգասաբեր աշխատանքով Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան գիտակրթական կենտրոններում ու հաստատություններում: Գործին և իր հետ շփվող մարդկանց հանդեպ հավատարմությամբ և ջերմորեն վերաբերվող Գ. Բրուտյանը մեծ սեր ու հարգանք է վայելում իր գործընկերների և հատկապես աշակերտների միջավայրում: Առանձնակի սիրով է նա հիշում աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի՝ ասպիրանտ եղած և հետագա տարիներին շարունակված իրենց ջերմ բարեկամության մասին: Այդ առիթով գրված գիրքը մի քանի հրատարակություն է ունեցել: 1963 թ. Տիգրան Պետրոսյանն ընդունվեց ասպիրանտուրա «Տրամաբանություն» մասնագիտության գծով (ղեկավար՝ Գ. Բրուտյան) և 1968 թ. թեկնածուական ատենախոսությունը գերազանց պաշտպանեց: Ուսանելի են շախմատի արքային՝ Մեծ աշակերտին գնահատելիս իր ուսուցչի փիլիսոփայական խոհերը. «Տիգրան Պետրոսյանը ազնվագույն անձնավորություն էր՝ օժտված մարդկային սքանչելի բարեմասնություններով: Եվ այլ կերպ չէր կարող լինել: Մեծ ինտելեկտի տեր մարդը մեծ է կյանքի ցանկացած բնագավառում, անկախ այն բանից, թե կյանքն ինչ դժվարություններ է ստեղծում նրա ճանապարհին: Եվ հակառակը. Եթե որևէ մեկն առօրյա կյանքում մանրախնդիր է, նրա ինտելեկտուալ մեծությունը պատրանք է: Կարող են լինել բացառություններ, սակայն այդ բացառությունները միայն ընդգծում են օրինաչափությունը: Տիգրան Պետրոսյանը իմ հուշերում մնացել է որպես մի ազնվագույն, բարի ու ընկերասեր անձնավորություն, մի սքանչելի անհատականություն, մի Մեծ հայրենասեր ու հայասեր, Մեծ անձնավորություն» (Գ. Բրուտյան, Տիգրան Պետրոսյանը իմ հուշաշխարհում, Ե., 2007, էջ 122):*

1970 թ. Գ. Բրուտյանի հիմնած՝ փաստարկման տեսության Երևանյան դպրոցի միջազգային ճանաչման շնորհիվ էր 1980 թ. Բրայտոնում (Անգլիա) կայացած Համաշխարհային փիլիսոփայական համաժողովում կազմկոմիտեի կողմից ականավոր փիլիսոփային՝ «Փաստարկման տեսություն» կլոր սեղանի ղեկավար նշանակումը: Տասնամյակների ընթացքում փաստարկման Երևանյան կենտրոնը առաջ քաշեց բազմաթիվ նոր գաղափարներ, հրապարակեց հոդվածների ժողովածուներ, կազմակերպեց միջազգային գիտաժողովներ: Գիտական շփումները և փիլիսոփայական խորհրդածությունները աշխարհահռչակ աստղագետ, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի հետ մշտապես ոգեշնչման աղբյուր են եղել Գեորգ Բրուտյանի համար:

Ակադեմիկոս Գ. Բրուտյանի գիտական գործունեությունը բարձր է գնահատվել միջազգային փիլիսոփայական հասարակայնության կողմից: Դեռևս 1970 թ. (15. I) ամերիկյան "The Armenian Reporter" (vol. III, N 11, թ. 5) շաբաթաթերթը, արտահայտելով արտասահմանյան փիլիսոփայական շրջանակներում Գ. Բրուտյանի մասին եղած կարծիքը, գրում էր. «Պրոֆեսոր Բրուտյանը կարկառուն փիլիսոփա է և միջազգային համբավ է ձեռք բերել փիլիսոփայության բնագավառում... Նա մի փիլիսոփա է, որը հասել է հարգանքի վերին աստիճանի՝ միջազգային հանրության փիլիսոփաների և մտածողների կողմից»: Մոսկվայում և Երևանում լույս տեսնող փիլիսոփայական հանդեսներում տված գնահատականները նույնպես վկայում են ակադեմիկոս Գ. Բրուտյանի բարձր հեղինակության մասին. «Գ. Ա. Բրուտյանի աշխատությունները, գաղափարները, հայեցակարգերը լայն տարածում են գտել և ընդունվել համաշխարհային փիլիսփոայական հասարակայնության կողմից» ("Вопросы философии", М., 1984, N 3, с. 17, "Вопросы философии", Е., 1988, вып. 6-7, с. 7) : «Գ. Ա. Բրուտյանը մասնակցել է համաշխարհային բոլոր վեց փիլիսոփայական համաժողովներին, Հեգելյան միջազգային բոլոր գիտաժողովներին... Նա դասախոսություններով հանդես է գալիս աշխարհի բազմաթիվ համալսարաններում, հանրաճանաչ է փիլիսոփայության միջազգային շրջանակներում» ("Философские науки", М., 1986, N 2, с. 161): «Գ. Բրուտյանը մեծ հեղինակություն է վայելում փիլիսոփայության միջազգային շրջանակներում, ինչի մասին վկայում են Բերտրան Ռասսելի, Կուրտ Գյոդելի, Ռուդոլֆ Կառնապի, Ալֆրեդ Տարսկու, Ալֆրեդ Աերի և արտասահմանցի այլ հայտնի փիլիսոփաների ու տրամաբանների՝ նրան ուղղված նամակները» ("Информационные материалы, М.", 1986, N 2, с. 67, "Вопросы философии", 1968, N 2, 1984, N 12, տե՛ս նաև Who's Who in the World, 18th Edition, New Jersey, 2001, p. 301, I. Zaslavsky, Kurt Gödel's letter to Georg Brutian and some problems of the philosophy of Mathematics connected with it, Yerevan, 2003) : Բուլղարիայի փիլիսոփայական հասարակայնության գնահատականը հնչեցվել է հետևյալ խոսքերով. «Ակադեմիկոս Բրուտյանի աշխատություններում առաջադրվում են նոր ու ինքնատիպ գաղափարներ, կամ էլ հիմք է դրվում փիլիսոփայական նոր բնագավառների» ("Философска мисъл", София (Болгария), 1986, кн. 3, с. 129): Կանադայում 1989 թ. տեղի ունեցած ոչ ձևական տրամաբանության միջազգային գիտաժողովի կապակցությամբ "The Windsor Star" (16.06.1989 թ.) թերթը նշել է, որ գիտաժողովին «ներկա էին 40 ամենահայտնի փիլիսոփաներ, լեզվաբաններ, այդ թվում՝ Գեորգ Բրուտյանը»: «Առաջին հինգհարյուրը» անգլիական կենսագրական հանրագիտարանում ականավոր գիտնականին նվիրված ակնարկն ավարտվում է հետևյալ ամփոփումով. «Մի հրատարակչի խնդրանքին՝ «...Համառոտակի բացատրեք Ձեր հատուկ հաջողությունների պատճառը», պրոֆեսորը պատասխանել է. «Ես միշտ անում եմ այն, ինչ հավանում եմ, բայց միշտ չէ, որ հավանում եմ

այն, ինչ անում եմ...»: Թերևս այս է նրա հետագա ծրագրերի բարելավման մշտական դրդապատճառը մասնավորապես իր հետազոտության փիլիսոփայության և տրամաբանության բնագավառներում, որոնք նա ընկալում է որպես երաժշտություն և պոեզիա» (“The First Five Hundred,” Cambridge, 1991, p. 105):

Այսպիսի գնահատականների հիմքում ակադեմիկոս Գ. Բրուտյանի՝ տարիների քրտնաջան աշխատանքով ձեռք բերված նվաճումներն են գիտական հետազոտությունների բնագավառում, ինչպես նաև նրա ստեղած գիտական մի շարք ուղղություններն ու դպրոցները: Գիտնականի հիմնական նվաճումները դասակարգվում են ըստ հետևյալ բնագավառների. 1) Տրամաբանություն (փոխակերպական տրամաբանություն, բազմատրամաբանության հայեցակարգ, դիալեկտիկական և ձևական), 2) Լեզվի փիլիսոփայություն (լեզվաբանական լրացչության սկզբունքը), 3) Փաստարկման տեսություն (փաստարկման տեսություն, փաստարկող դիսկուրսի կաղապար, փիլիսոփայական փաստարկման առանձնահատկությունը), 4) Թարգմանության տրամաբանություն (թարգմանության տեսություն ու մեթոդաբանություն), 5) Իմացաբանություն և մեթոդաբանություն (ընդհանուր սեմանտիկայի իմացության տեսություն), 6) Հայ փիլիսոփայության և տրամաբանական մտքի պատմություն (հին հայկական փիլիսոփայության՝ դասականի տրամաբանական հայացքների վերլուծությունը, մեթոդաբանական ուղի արիստոտելագիտության զարգացման որոշ դժվարությունների հաղթահարման համար, Դավիթ Անհաղթի ուսմունքի տրամաբանության մասին, հայագիտություն և մետահայագիտություն, հայագիտության առարկան):

Ակադեմիկոս Գ. Բրուտյանի գիտական հետազոտությունների ճանաչումը ընդլայնվել է XX դ. 50-ական թթ. մինչև այժմ նրա ակտիվ մասնակցությամբ համաշխարհային, միջազգային փիլիսոփայական համաժողովներին՝ Իտալիայում, Մեքսիկայում, Վիեննայում, ապա՝ Հեգելյան գիտաժողովներ Փարիզում, Բեռլինում, Դավիթ Անհաղթի 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով Երևանում, Համաշխարհային փիլիսոփայական համաժողովներ Վառնայում, Դյուսելդորֆում, Մոնրեալում, Բրայտոնում, Խ. Պերելմանին նվիրված գիտաժողով Բրյուսելում, Զեկուցում Տուրկուի համալսարանում, Հրապարակային զեկուցում Հալեպում, Զեկուցում Երուսաղեմի հրեական համալսարանում, Զեկուցում հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերակցության ընդհանուր ժողովում (Վիեննա), Աթենքում Փիլիսոփայության միջազգային ակա- դեմիայի հունական մասնաճյուղի ստեղծմանը նվիրված գիտաժողով և այլն, արտասահմանյան համալսարաններում կարդացված զեկուցումներով (Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարան, Բելգրադի համալսարան, Օքսֆորդի, Քեմբրիջի, Վելինգտոնի Վիկտորիա, Լոնդոնի և Շեֆիլդի,Ֆրեզնոյի, Բոստոնի, Լոս-Անջելեսի, Բրիջպորտի, Նյու-Յորքի, Քենտի, Պիտսբուրգի, Սան Ֆրանցիսկոյի, Ստենֆորդի և Չիկագոյի, Ուպսալայի և Լունդի, Տոկիոյի և Կիոտոյի, Հելսինկիի, Սոֆիայի, Գենտի և Բրյուսելի, Բեյրութի Հայկազյան, Երուսաղեմի Հրեական համալսարաններում, հրապարակային դասախոսություններ Լոնդոնում, Սիդնեյում, Քրայսչըրչում, Դելիում, Հայդարաբադում, Գունտուրում և Նիդադովոլում, Աթենքում, Լյուբլինում, Սոֆիայում, Վառնայում և Բուրգասում, Բուդապեշտում, Լա Կարունիայում, Տորոնտոյում և Մոնրեալում, Բուենոս-Այրեսում, Մոնտեվիդեոյում, Ուտագավայում, Ամստերդամում և այլն), ինչպես նաև ակադեմիական և միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ [(ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, նախագահության անդամ, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի հիմնադիր պրեզիդենտ, Փաստարկման հետազոտությունների Եվրոպական կենտրոնի

*(Բրյուսել) և «Հաղորդակցում և իմացություն» միջազգային ընկերության (Գենտ) պատվավոր անդամ, Փաստարկման հետազոտությունների միջազգային ընկերության (Ամստերդամ) Խորհրդակցական վարչության անդամ, «Ոչ-ձևական տրամաբանություն և քննադատական մտածողություն» միջազգային ընկերության (ԱՄՆ) պատվավոր փոխպրեզիդենտ, «Միջազգային կենսագրական ասոցիացիայի (Մեծ Բրիտանիա) ցմահ անդամ», «Ամերիկյան կենսագրական ինստիտուտի՝ հետազոտական ընկերակցության փոխկառավարիչ», «Նվաճումների համաշխարհային ինստիտուտի» (ԱՄՆ) ցմահ անդամ, Համաշխարհային գրական ակադեմիայի (Մեծ Բրիտանիա) ցմահ անդամ, Փաստարկման միջազգային ինստիտուտի հիմնադիր պրեզիդենտ, «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ, Անվտանգության և խաղաղության միջազգային խորհրդարանի (Իտալիա) սենատոր, Լոնդոնի դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ, Միջազգային դիվանագիտական ակադեմիայի անդամ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի (ԱՄՆ-Նիդեռլանդներ-Հայաստան) պրեզիդենտ, Գիտությունների Սիցիլիական ակադեմիայի գիտական խորհրդատու, Գիտությունների համաշխարհային կենտրոն «Լեոնարդո դա Վինչի» հոգեբանական-սոցիալական ազգային կենտրոնի փորձագետ սոցիոլոգիայի գծով և այլն)]:*

*Համաշխարհային գիտական շրջանակներում ակադեմիկոս Գ. Բրուտյանի մեծ վաստակի ճանաչման վկայությունն են մեծարումները և պարգևատրումները, որոնց նա արժանացել է իր ստեղծագործական արգասավոր գործունեության տարիների ընթացքում. Մեծ Մաստերտոնի (Նոր Զելանդիա) պատվավոր քաղաքացի, Կամենսկու անվան մեդալ (Բրատիսլավայի համալսարան), Պատվո նշան առաջին կարգի (Չեխոսլովակիա), Վավիլովի անվան մեդալ (Մոսկվա), Ժողովուրդների բարեկամության շքանշան (Մոսկվա), Վաստակի վկայական, Միջազգային կենսագրական ինստիտուտ (Մեծ Բրիտանիա), Գերազանցության համաշխարհային պատվո նշան (ԱՄՆ), Տարվա մարդ (Ամերիկյան կենսագրական ինստիտուտ), Նվաճումների մեծ դեսպան (ԱՄՆ) Տարվա միջազգային մարդ (Կենսագրական միջազգային կենտրոն, Քեմբրիջ), Ականավոր ղեկավարության մեդալ՝ փիլիսոփայական գիտությունների բացառիկ ծառայություն (ԱՄՆ), Ոսկե մեդալ (Քեմբրիջ), Հաջողության բանալի. Գիտության առաջնորդ (ԱՄՆ), Մեդալ «Առաջին հինգհարյուրը» (Մեծ Բրիտանիա), Մեդալ «Կիսատո համալսարան», Գուտենբերգ համալսարանի մեդալ (Շվեդիա), Մեդալ «Պունտա դել Էստե» (Իտալիա), XXI դ. 2000 ականավոր գիտնականներ (Կենսագրական միջազգային կենտրոն, Քեմբրիջ) և այլն:*

*Մեծն Դավիթ Անհաղթի փառքը կրող հայ փիլիսոփայական մտքի անմնացորդ նվիրյալին, աշխարահռչակ փիլիսոփա ակադեմիկոս Գ. Բրուտյանին շնորհավորում ենք իր հոբելյանի առթիվ և ցանկանում ստեղծագործական անսպառ, արգասաբեր կյանք:*

**ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.**
Պատմական գիտությունների դոկտոր,
Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ